թէ նա որսայցէ զնա բանիւք և ուրացուսցէ։ Եւ առեալ տարան զնա առ մուֆտին, որ էր Պահայի անուանեալ այր ժպիրհ և ժանդագործ, զոր և նա բազում հնարիւք ոչ կարաց դարձուցանել զնա ի հաւատոցս Քրիստոսի. վասն որոյ և իմացեալ զայս վէզիրին, կրկին մարդ առաքեաց առ մուֆտին զի տացէ ֆէթվայ զի սպանցեն զնա չարաչար. զի այս էր օրէն նոցա, զի առանց մուֆտոյ ֆէթվային զմարդ չէին սպաններ։ Եւ մուֆտին ոչ ետ ֆէթվայ, այլ ասացեալ թէ Այսմ բանի ոչ լինի սպանման ֆէթվա, այլ տացեն զնա ի նաւս պատերազմաց։ Եւ վէզիրն տվեալ զնա անդ ի նաւն զի թի քարշեսցէ անդ կապանօք երկաթի, և ընդ ծառայիցն զամենայն զծանր ծառայութիւնն կրեսցէ։ Եւ նա զնաց յօժարաբար և սեռն սրտիւ վասն սիրոյն Քրիստոսի։ Եւ յետ աւուրց ինչ եղեալ զնացին նաւքն[1]) ի պատերազմն, և նա ևս կայր անդ ի չարչար[անս] եւ մի ի թի քաշող[աց]։ Եւ շատ ջանացին զերծուցանել զնա հայրն[2]) և եղբարքն որ աստ էին և ոչ կարացին, այլ զնացին ի պատերազմն և նա էր ի մէջ նոցա անտանելի չարչարանացն համբերեալ։ Եւ յետ պատերազմին որ եկին Տաճկունքն, և նա ևս ողջ էր մնացեալ, զոր և վէզիրն ևս սատակեալ էր և յետ նորին Մէլէկն էր եղեալ և յետ նորին Իֆչիրս, որ այժմս է։ Փնացին հայր[3]) սորա և եղբարքն առ Մուրատ փաշան, զոր էր նա զափուտան, ծանուցին. և նա ևս զայս իմացեալ ասաց թէ Զի բարի եղեր այս. գայցէ այժմ, դարձցի ի հաւատս մեր և զինքն առնիցեմ ինձ մի հաւատարիմ։ Այլ և նա ևս բազումս չարչարեաց ի ծանր և յանարգ ծառայութիւնն, արկանելով անդ ի բանտս գերելոցն և շատ գանելով ջանաց թէ Զեռամբ իմ

1) զնաւքն. 2) հայրքն. 3) հայրք.